

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՏՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԲՅՈՒՋԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԺԵՔ

(Նիկողայոս Ադոնցի «Լիկանդոսի Բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում» անտիպ հոդվածը)

Ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը (1871-1942 թթ.) բացառիկ երևույթ է մեր իրականության մեջ իր բարձր ու բազմակողմանի կրթվածությամբ, լեզուների խոր իմացությամբ, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն ստեղծագործելու ունակությամբ, պատմաբանի և բանասերի քննախույզ և ճշգրիտ տաղանդների զուգորդմամբ, տարբեր ժամանակաշրջանների և երևույթների լայն ու համակողմանի ընդգրկմամբ, անկողմնակալ ու սթափ հայրենասիրությամբ, պատեհապաշտությունից և միտումնավորությունից հեռու մնալու հեռատեսությամբ, ազնվատոհմ ծագմամբ ու գործելակերպով և, վերջապես, իր թողած հարուստ ժառանգությամբ: Դիպուկ է նկատել նշանավոր գրող Մուշեղ Իշխանը, որը բնութագրելով Նիկողայոս Ադոնցին՝ գրում է. «Հայաստան իսկ էր կարծես Ն. Ադոնց, անոր լավագույն հատկանիշներուն մարմնացումը, անոր մարդկային պատկերը: **Հայ մարդն** էր ան՝ բառին ավանդական, արդիական և ազնվական իմաստով: Հայոց հինավուրց մշակույթի, հերոսական պատմության, գեղեցկությանց և հայ նկարագրի առաքինություններուն ապրող բերդը, որ գիտե ուրախություն և հպարտություն ներշնչել: Մեր հողին բույրը և մեր լեռներուն շունչը ուներ ան իր մեջ: Եթե կարելի է մարդատիպարով մը բնորոշել ու երևակայել ամբողջ երկիր մը, պրոֆ. Ն. Ադոնց առաջիններեն մեկն էր, ապահովաբար Հայաստանը ներկայացնող մեր մտավորականներուն»¹:

Իրավամբ Ն. Ադոնցը XX դարի ամենանշանավոր հայ պատմաբաններից մեկն է, թերևս ամենանշանավորը: Նա թողել է հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով գրված հարյուրից ավելի աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմությանը, գրականությանը, Հայ Առաքելական Եկեղեցու և կրոնի պատմությանը, առասպելաբանությանը, ծիսագիտությանը, լեզվաբանությանը, արվեստի պատմությանը, Հայկական հարցի խնդիրներին և այլն: Հայ պատմագիտության խոշորագույն նվաճումներից է Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (ռուս. 1908, 1971, անգլ. 1969, հայ. 1987) կոթողային մենագրությունը: Հայկական բանասիրության նշանակալից արժեքներից է Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» (ռուս. 1915, ֆր. 1970) մենագրությունը, որտեղ 30 ձեռագրերի բաղդատման հիման վրա հրատարակել է Դիոնիսիոս Թրակացու Քերականության հայերեն թարգմանությունը՝ կից հունարեն բնագրով և այս երկի հայկական մեկնություններով: Արժեքավոր են Մեսրոպ Մաշտոցին (1925), Մովսես Կաղանկատվացուն (2005) նվիրված մենագրությունների, «Պատկերների խնդիրը» գրքի

(2003) և հատկապես եռահատոր «Հայոց քննական պատմության» Ա հատորի (Ֆր. 1946, հայ. 1972) հրատարակությունները, որոնք գիտական մնայուն արդյունքներ են և կարևոր ներդրումներ հայագիտության բնագավառում:

Այնուհանդերձ, միջազգային գիտական շրջաններում նա առավելապես հայտնի է իր բյուզանդագիտական ուսումնասիրություններով: Դեռևս 1901 թ. լույս է տեսնում բյուզանդական բանաստեղծուհի Կասիային նվիրված նրա մի փոքրիկ ուսումնասիրությունը, որտեղ փորձում է ի ցույց հանել կայսրության տարածքում հայերի խաղացած քաղաքական ու տնտեսական անուրանալի դերը: 1908 թ. լույս տեսած «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» մենագրությունը միանգամից հռչակեց նրա անունը, իսկ գիրքը դարձավ Ս. Պետերբուրգի բյուզանդագիտական համալսարանի դպրոցի լավագույն նվաճումներից մեկը:

1920-ական թվականների սկզբներին Ադոնցը տեղափոխվում է արտասահման: Լոնդոնում (1920-1921), Փարիզում (1922-1931) և Բյուսելում (1931-1942) նա ամբողջովին նվիրվում է գիտական գործունեության և մասնագիտական հանդեսներում պարբերաբար տպագրում իր գիտական պրպտումների արդյունքներ հանդիսացող հիմնալի ուսումնասիրությունները: 1920-ական թվականների վերջերից սկսյալ ընդհուպ մինչև 1940 թվականը նա տպագրում է շուրջ հիսուն հետազոտություններ, որոնք գլխավորապես նվիրված էին Բյուզանդիայի պետական, ռազմական, կրոնական ու մշակութային կյանքում ակնառու դեր խաղացած հայագի գործիչներին և հայկական ընտանիքներին: Նշանակալից են «Բյուզանդական կայսր Լևոն V-ի ծագումը» (1927), «Արտավան Արշակունի» (1929), «Դիգենիա Ակրիտաս բյուզանդական էպոսի պատմական հիմք» (1929-1930), «Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա» (1930), «Վարդ Մամիկոնյան» (1930), «Հայերը բյուզանդական գիտությանց մեջ» (1930), «Վասիլ Հայկազն» (1931), «Մորիկի մասին լեգենդը և Բյուզանդիայի Կոստանդին V կայսրը» (1933-1934), «Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում» (1934, 1935, 1936), «Հովհաննես Չմշկիկ կայսր և Աշոտ III» (1934), «Փիլարտոսի ընտանիքը» (1934), «Հայ-բյուզանդական նոթեր» (1934, 1935), «Թեոդորական ընտանիքը» (1935), «Ռուբինյանների նախահայրը» (1935), «Աշոտ II Երկաթ. թագավոր Հայոց» (1935), «Թեոփիլակտոսը և Տարոնացիները» (1936), «Թոռնիկ Վանականը» (1938), «Մամուել Հայր բուղարների թագավոր» (1938), «Տարոնացիների ծագումնաբանությունը» (1939) և այլ ուսումնասիրություններ: Մյանց ճնշող մեծամասնությունը լույս է տեսել միջազգային լայն ճանաչում ունեցող պարբերականներում («Byzantion» և այլն):

Ադոնցի նմանաբնույթ ուսումնասիրությունները կարևոր ներդրումներ են բյուզանդագիտության բնագավառում: Ըստ էության, նա առաջինն էր, որ համոզիչ փաստերով ապացուցեց, որ բյուզանդական արքունիքի և հատկապես բանակի «բազմաթիվ բարձր պաշտոնյաները հայ նախարարական տոհմերի հաջորդներն են»: Ն. Ադոնցը «փաստորեն ցույց է տալիս նախարարական տների արտագաղթի երկրորդ փուլը, երբ, լքելով հայրենիքը, հայ ազատանին ապաստան է գտնում բյուզանդական գահի շուրջը և, փոխելով դավանանքը, դառնում բյուզանդական վերնախավի կարևոր բաղկացուցիչ տարրը: Այսպիսով, նա կարողանում է երևան հանել պատմա-

կան մի երևույթ, որ հավասար չափով կարևոր է Հայաստանի ու Բյուզանդիայի արտաքին հարաբերությունները և ներքին կյանքը ուսումնասիրելու համար»²:

Ադոնցի հետազոտությունները ուսումնասիրողների առջև բացեցին նոր, անծանոթ ու միաժամանակ լայն հորիզոններ: Իրավացի է նշանավոր բյուզանդագետ Ժ. Գարիտը, երբ գրում է, թե մինչև Ադոնցը բյուզանդագիտությունը զարգանում էր միակողմանիորեն, համարյա թե առանց հաշվի առնելու հայկական համապատասխան նյութը, որը ոչ միայն հետևանք էր լեզվի չիմացության, այլև արևելյան սկզբնաղբյուրների նկատմամբ ավանդական արհամարհական, մերժողական վերաբերմունքի:

«Ադոնցի աշխատությունները,- գրում է Ժ. Գարիտը,- բազմաթիվ կոնկրետ օրինակներով ապացուցեցին, որ հայկական սկզբնաղբյուրները լրացնում են, և հաճախ չափազանց էականորեն, բյուզանդական սկզբնաղբյուրների ավանդած վկայությունները, իսկ երբեմն էլ դրանք ավելի նախընտրելի են, քան բյուզանդական սկզբնաղբյուրները»³: Մեկ այլ ականավոր բյուզանդագետ՝ Անրի Գրեգուարը, նշում է, որ, շնորհիվ Ադոնցի ուսումնասիրությունների, «Բյուզանդիայի պատմությունը սկսում է երևալ նոր լույսի ներքո: Նրա ուսումնասիրություններն իրենց պարզությամբ ու բերված նոր փաստերի առատությամբ ապացուցեցին հայագիտության անվերապահ կարևորությունը Բյուզանդիայի պատմության ուսումնասիրության բնագավառում: Ի սկզբանե Ադոնցը նպատակ էր հետապնդում լուսաբանելու իր ազգակիցների ունեցած հսկայական մասնակցությունը բյուզանդական քաղաքակրթության զարգացման ու շարունակականության գործում: Նա հմտորեն ապացուցեց, որ հայ զինվորականության թափած արյունն ու ծագումով հայ պետական գործիչների ու զինվորականների հանճարն է բազմիցս փրկել, ոտքի կանգնեցրել, ամրապնդել ու երիտասարդացրել Բյուզանդական կայսրությունը, մի կայսրություն, որն իրավացիորեն արժանի էր կրելու բյուզանդա-հայկական անունը»⁴:

Հաշվի առնելով Ադոնցի բյուզանդագիտական աշխատությունների աներկբա նշանակությունը համակարգի բոլորանվեր ուսումնասիրության բնագավառում՝ 1965 թ. Լիսաբոնի «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունն իրականացրեց մեծ հայագետի առավել կարևոր արժեք ներկայացնող բյուզանդագիտական 13 հետազոտություններ պարունակող ֆրանսերեն ժողովածուի հրատարակությունը⁵: Նույն հիմնարկության նախաձեռնությամբ նախատեսվում է առաջիկայում մեկ հատորով նաև հայերենով հրատարակել Ադոնցի բյուզանդագիտական երկերի ժողովածուն⁶:

Մոտավորապես այս շրջանակներում էր հայտնի Ն. Ադոնցի բյուզանդագիտական վաստակը, երբ 1992 թ. Համագգայինի Բեյրութի գրական արխիվում մեր կողմից հայտնաբերվեց պատմաբանի թողոնը⁷: Այստեղ, ի շարս պատմագիտական անսքող հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ անտիպ նյութերի, պահպանվել են նաև մի քանի բյուզանդագիտական ավարտուն և անավարտ հետազոտություններ: Դրանց մեջ առանձնանում են «Դավիթ Կյուրոպաղատ (†31-ը մարտի 1000 թ.)»⁸ և «Լիկանդոսի բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում» վերտառությամբ ֆրանսերեն հոդվածները: Ադոնցի վերջին հոդվածի գրությունից անցել է

ավելի քան 70 տարի: Լիկանդոսի բանակաթեմի և Մլեհի մասին լույս է տեսել Ժ. Դեդեյանի հետաքրքրական հոդվածը⁶, սակայն Ադոնցի աշխատությունը չի կորցրել իր գիտական մեծ արժեքը: Այն նշանակալից մի էջ է բացում հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության ուսումնասիրության բնագավառում:

Նկատի ունենալով Լիկանդոսի բանակաթեմին նվիրված հոդվածի հույժ կարևորությունը և գիտական արժեքը՝ որոշեցինք այն պատրաստել տպագրության և ներկայացնել «Էջմիածին» հանդեսի ընթերցողների ուշադրությանը: Հոդվածը, որի թարգմանությունն իրականացրել է Վ. Պողոսյանը, բարեբախտաբար ավարտուն է (ձեռագիր 31 էջ)⁹: Այն գրվել է 1930-ական թվականների վերջերին Բրյուսելում: Տպագրվում է անփոփոխ, խմբագրական անհրաժեշտ միջամտություններն առնված են ուղիղ՝ [] փակագծերի մեջ: Հունարեն հատվածները թարգմանել է Օ. Ս. Վարդագարյանը:

Լիաժույս ենք, որ «Լիկանդոսի» տպագրությունը ոչ միայն հաճելի անակնկալ կլինի բյուզանդագետների համար, այլև կհարստացնի մեր պատկերացումները մի այնպիսի վիթխարի մեծության մասին, ինչպիսին էր Նիկողայոս Ադոնցը, որի մշտական տեղը **«Հայաստանի պանթեոնն է, անմահներու հանգստարանին մեջ»**¹⁰: